

ՁԿՆՈՐՄՆ ՈՒ ՖԷՅԱՆ

(Ծապոնական լեզբնդա)

Հեռուամ, կապոյտ հորիզոնը եզրափակող լեռնաշղթայի վրայ, լուսանում է երկինքը և՛ սիրահարուած աղջկայ երեսի նման՝ ալ գոյն է ստանում: Ծիծեռնակները վեր-վար են թռչում, բարձրասրուն արագիւնները իրանց երկար ու լայն թևերով դէս ու դէն են կտրում վաղորդեան օդը:

Ծովի ափին մտախոհ կանգնած է Ֆուզձի սարը, որի ստորոտը փաթաթուած է թաւշեայ կանաչ գորգով, իսկ ձիւնապատ գագաթը շողշողում, պեծին է տալիս երկնի կապոյտում:

Առաւօտուայ գունատ արեգակը աւելի ու աւելի բարձրանում է հորիզոնի վրայ, հեռուն աւելի ու աւելի լուսաւորում է: Ծառերի ճիւղերի մէջ աղմկում և՛ առանց խօսքերի՝ երգ է երգում քամին, որին դաշնակցում են շարժուող տերևները:

Տարածութեան մէջ, մի տեղից, լսում են սրնգի և քնարի երկչոտ, դողդաշուն, դիւթական ձայները...

Ձիւնի սպիտակ ֆօնի վրայ, լեռան գագաթի մօտ, գոյանում է մի ամպ, որը երերւում է տարածութեան մէջ: Ամպը ճեղքւում է— և մետաքսափայլ թևերը շարժելով՝ գետնի վրայ է իջնում մի շողաթաթախ, սքանչելի ֆէյա... Լսւում է թևերի խշխշոցը, թեթև քամու ձայնը, և լեռների դիցուհին հանդարտ իջնում է գետնի վրայ:

Այդ ոգին, որը միայն շողազարդ երկինքն էր տեսել, հիմա յափշտակուած է երկրի սքանչելի տեսքով... Ֆէյան վազվզում է սիլաւէտ մարմանդով, քամին շոյում և համբուրում է նրա ուսերը, նրա շուշան մատները չքեղ ծաղիկներ են քաղում...

Յանկարծ նա բացազանչեց— նրա առաջ տարածուած էր ծովը...

Այս ինչ է: Երկնքի մի մասն է որ իր հետ ընկել է գետնի վրայ... կամ, կարելի է, սա որևէ մի աստծու ծածկոց է, որին ինքը չի ճանաչում...

Նա աւելի է մօտենում, թեքւում է...

Ա՛խ, ինչպէս կը ցանկայի գէթ մի անգամ սուզուել այս ալիքների, այս վճիտ հեղուկի մէջ՝

Ֆէյան արագութեամբ վար է անում իր վրայից փետուրէ ծածկոցը, կախում է նրան սոճու ճիւղերից և՛ ճերմակ, ինչպէս խնձորենու ծաղիկ՝ սկսում է լողալ ալիքների մէջ:

Նրա կուսական սպիտակափայլ մարմինը ձուլւում է ձիւնափայլ փրփուրի հետ:

Բամբուկեայ խրճիթից դուրս է գալիս Կիոն, մի երիտասարդ ձկնորս, և շտապում է դէպի ծով: Նա իր գլխին ձրկնորսական ցանց է տանում, որի հիւսուածքից նրա դեղնադոյն երեսին կլորած և ստուերներ են նկարւում:

Ձկնորսը սիրոյ երգ է երգում. նա սիրեցեալ չունի—նա աստուածներին է ուղղում իր երգը նրա մասին:

Այս ի՛նչ է կախուած սոճու ճիւղերից: Սպիտակ ամպ է որ հողմը նետել է այստեղ:

Կամ մեծ ճերմակ կարապի թևեր են:

Ո՛չ, դա բմբուլէ ծածկոց է... Դա թև է, դա ամպի տակ սաւառնող թռչունի զարդ է...

Ձկնորսը աւելի է մօտենում, ձեռքերով շօշափում է ֆէյայի հմայիչ պաճուճանքը: Հրաշալի բուրմունք է տարածւում ծածկոցից: Ձարմացած ձկնորսը աշխատում է գտնել դիւթական ծածկոցի տիրոջը:

—Այս ինչ երկնային արարած է իր հրեշտակային ծածկոցը թողել այստեղ:

Ալիքների աղմուկը ձկնորսին ստիպում է նայել դէպի ծովը:

Կապոյտ ալիքների վրայ շողշողում է ֆէյայի շքեղ ու սպիտակ մարմինը:

Ձկնորսը վազում է, իսկ գլխին ծածանւում է ցանցը և չի թոյլ տալիս տեսնելու:

Սակայն ձկնորսը ուշադրութիւն չի դարձնում, վազում է ֆէյայի ետևից... Լեռների դիցուհին հրում է խիզախ ձկնորսին իր սպիտակ ուսով... Վերջապէս, յոգնած ձկնորսը ընկնում է ծառի տակ: Ֆէյայի սպիտակ ծածկոցը ընկած է նրա վրայ, ինչպէս քնած կարապ:

Այդ ժամանակ դիցուհին դուրս է գալիս ծովից և ծածկելով մարմինը, որը շողշողում էր ջրի ցնցուղի ադամանդներով ու զմրուխէ ծովասէզով, մօտենում է ձկնորսին և, պարզելով ձեռքերը դէպի նա, ասում է.

—Ո՛վ մահկանացու, տո՛ւր իմ թեւերը. առանց դրանց՝ ես չեմ կարող վերադառնալ տուն:

Ձկնորսը չի լսում նրան—և հարցնում է.

—Անունդ ի՞նչ է, դու հւմ աղջիկն ես:

—Ես հչ հայր ունիմ, հչ մայր, իսկ իմ անունը դիտեն միայն հողմերն ու լուսինը: «Ծովի ծաղիկ» կոչի՞ր ինձ: Ձկնորս, տո՛ւր ինձ իմ թեւերը, մի տրորի՛ր նրանց քո ձեռքերով:

—Օ՛, ֆէյս, որի՞ն ես պիտի «ծովի ծաղիկ» անուանեմ, քո ծածկոցը կը տամ քեզ, միայն ասա—ի՞նչ պարգև կը ստանամ դրա փոխարէն:

—Ի՛նչ որ ցանկաս!...

—Տոյց տո՛ւր ինձ երկնքի բնակչուհի, Ուզումայի կախարդական պարը, անց պարը, որի օգնութեամբ աստուածները ամպերի մէջ կառավարում են աստղերի շարժումները երկնակամարի վրայ...

Հրաշալի ձայներ տարածուեցին ծովի ափին. նրանց իբրև պատասխան, արձագանք էր տալիս ալիքների շոյիչ աղմուկը, որոնց վրայ շարժում էին աներևոյթ ոգիները, թմբուկների ձայները, սրինգների հրաշալի մեղոգին և ծնծղանների ակկորդները ներդաշնակում էին պարը:

Երկինքը բոսորագոյն է դառնում... Սքանչելի Փուդձին սփռուած է կուրացուցիչ շողակներով:

Պարի՛ր, դիցուհի, երկրի վրայ քեզ նմանը չկայ!...

Պարելով ու ձկնորսին շրջապատելով կախարդական օդակով՝ ֆէյսն մի ճարպիկ շարժումով յանկարծ յափշտակում է իր ծածկոցը:

Օղակը լայնանում է... Ֆէյսն թեւերը քանում, թափահարում է և սկսում է բարձրանալ դէպի երկինք: Նա արդէն Ֆուդձիի գագաթի մօտ է, թռաւանցաւ Ուկուշումայի սիզաւետ մարմանդները, անցնում է Աշիդակիի ձիւնի վրայով, անհետանում է...

Ձկնորսը ծունկ է չոքում, ձեռքերը տարածում է դէպի երկինք, դէպի անհետացող տեսիլը... Նրա յուսահատութեան մէջ այնքան զգացմունք կայ, այնքան անասման սէր, որ ֆէյսն յանկարծ կանգ է առնում:

Ժպտում է կախարդուհին և՛ թեքուելով՝ ընկնում է ձրկնորսի ոտների մօտ, ինչպէս վիրաւորուած թռչուն...

Մէրը յաղթանակեց...

Աղքատիկ խրճիթում նորապսակներից մէկը մոռացաւ երկիրը, իսկ միւսը՝ երկինքը:

Թարգմ. Սալլիմեան